



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

142
ՆԵՐԻ ՊԵՐԵԿՐԾԱՎԻ ԿԸՆՊԵՆԻՑՅ ԸՆԹԱԾ

ԱՐՅԱՌԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՆԵԼԻՔՆԵՐԸ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ
ՎԵՐԱՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ



✗

ՀՐԱՏ. Հ.Ս.Խ.Հ. ԿԵՆՏՐԱՆԱԿՈՄԻ № 2

ՅԵՐԵՎԱՆ

1934

Երբեմն Հայոց պատմութեան

Պետհատի տպարտն Յեղիան

Գլուխիս № 507 պատմ. 1898 միլ. 2500

ԲՈԼՈՐ ԴՐՈՇԿԱ ԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

42 42 Կենացառարժության, զուծարկամ և դիմումներին յիս
աջարագովիարձություններին)

Ակվամ և խորհուրդների հաշվետու-
մերնաբական կամպանիան:

Յարաքանչյուր պրոֆիլազմակերպու-
թյուն պարտավոր և ամենաբակտիվ կերպով
մտանակցել այդ կամպանիային՝

1. Կազմակերպելով ու գլխավորելով եր-
արաւդրության բանախործառաւողների ակ-
տիվ մասնակցությունը «Առհուրդների 7-րդ
համագումարի անվան սոցիալիստական ար-
տապական արշավին»:

2. Ապահանվելով տեխարդֆինալանների
վորակական և բանակական բարձր ցուցանիշ-
ներով կատարումը համագումարի բացմանը:

3. Անհապոքելով տեխմինիմումը և
անցկացնելով հաստեխնությունները՝ ձրգ-
ակելով սասանալ $100^{\circ}/_{\text{o}}$ -ի «գերազանց»:

4. Նոր թափ հաղորդելով սոցմրցման ու
հարիւծայնությանը՝ համագումարին սո-
պորտ տալու իրավունք ձեռք բերել:

5. Կազմակերպելով արդյունքու կուլտուրական
ցեխի, պորձարանի, ակումբի հետո հաշարամի,

բակի, բանհանրակացարանի, տան, փողոցի
և քաղաքի համար՝ սանիտարական հսնձնա-
ժողովներ և սանիտարական շաբաթորակներ
կազմակերպելու միջոցով:

6. Շեֆական ոգնություն հասնելով
գյուղին՝ պլանները կատարելու գործում և
ապահովելով միջմոբի պլանների կատարու-
մը:

7. Ծավալելով պրոֆքաղուսուցման ան-
դրագիտության վերացման և տեխուսուզման
մասսայական ցանց:

Միաժամանակ յուրաքանչյուր պրոֆկաղ-
մակերպություն պարտավոր ե մասսայական,
բացատրական լայն աշխատանքի միջոցով
ապահովել ճայնի իրավունք ունեցող բոլոր
աշխատավորներին և նրանց ընտանիքի ան-
դամների 100 տոկոսային ներկայությունը և
ակտիվ մասնակցությունը հաշվետու վերը-
տրական աշխատանքներում, միաժամանակ
յերևան հանելով արտադրություն խցկված
անհարազատ տարրերին:

Ամեն մի գործարան ակումբ, հիմնարկ-
ձեռնարկ պետք ե ապրի Խորհուրդների 7-րդ
համագումարին նախապատրաստվելու կյան-
քով, լույս ընծայել պատի թերթեր, իլիչով-
կաներ, փակցնել լողունգներ, պլակատներ,
գիագրամաներ և այլն:

Երրաքանչյուր պրոֆկազմակերպու-
թյուն պարտավոր ե ունենալ Խորհուրդների

Համագումարին նախապատրաստվելու և հաշվետու վերընտրական կամպանիան անցկացնելու իր աշխատանքների կոնկրետ որացուցային պլանը:

Վերակառուցված պրոֆմիությունների անդրանիկ քննությունն եւ այս կամպանիայի անցկացումը և ամեն մեկը պետք եւ աշխատի լավագույնը լինել այդ գործում:

Խորհուրդների հանրապետական և միութենական համագումարներում ուսպորտ տալլ պատվի գործ և և պետք յուրաքանչյուր բանվորական կոլեկտիվ իր պատվի գործը դարձնի ուսպորտ տալու իրավունք ձեռք բերելու խնդիրը:

ՀԱՄԿ-ի նախագահ՝ ՏԱՆԻԿ

ԱՐԴՄԻՌԻԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ ԽՈՐ- ՀՈՒՐԴՆԵՐԻ ՎԵՐԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Աժմ՝ չաշվետու—զերընտրական կամ-
պանիան պետք ե ծառայի պրոլետարիատի
դիկտատուրայի հետագա ամրացման և խոր-
հուրդների յերկրի պաշտպանունակության
ուժեղացմանը։ Այդ խնդրի հաջող իրակա-
նացումը հնարավոր ե միայն այն դեպքում,
յեթե պրոլետարական դիկտատուրայի Պե-
տության բոլոր մարմինները արհմիություն-
ները, խորհուրդները, կոոպերացիան, կոմ-
յերիտմիությունը ավելի սերտ կապ ունենան
աշխատավոր մասսաների հետ։ Այդ տեսակ
կապ մասսաների հետ առաջին հերթին պետք
ե հաստատեն խորհուրդները իբրև իշխանու-
թյան պետական մարմիններ։ Առաջիկա վեր-
ընտրություններին անհրաժեշտ ե ել ավելի
բարձրացնել խորհուրդների դերը, իսկ իբրև
կուսակցության գլխավոր գիծն անցկացնող-
ների, և այդ միջոցով բոլոր խորհուրդներն ու
գործկոմները դարձնել մարտական շտաբներ
սոցիալիստական շինարարության կոնկրետ
հարցերի ղեկավարման գործում։ Խորհուրդների
ամրացմանը հիշյալ ուղղությամբ կա-
րելի յե հասնել միմիայն նրանց հետագա,

ամենորյա աշխատանքը վերակառուցելով
17-րդ կուսամհագումարի կազմակերպչական
հարցերի մասին կայացրած վորոշումների
համաձայն, բանվորներից և կոլտնտեսական
լավագույն հարվածայիններից խորհուրդների
կազմի մեջ ընտրելու միջոցով և խորհուրդնե-
րի ու նրանց մասսայական կազմակերպու-
թյունների աշխատանքի մեջ ներդրավելով
աշխատավոր գյուղացիության ել ավելի լայն
խավերը։ Խորհուրդների ամրացումը չի կա-
րելի հաջողությամբ իրադործել սուանց ար
հետակցական միություննեարի ակտիվ մաս-
նակցության, վորոնք միացել են մեր հիմնար-
կությունների աշխատավորներին, քաղաքա-
յին ձեռնարկություններին, տրանսպորտի,
խորհանակասությունների և ՄՏԿ-այանների
մոտ 20 միլիոն բանվորներին։ Մինչև այժմ
արհմիությունները խորհուրդների ամրա-
պնդման և պետապարատի աշխատանքի բա-
րելավման հարցերով զրադվում եյին շատ
անբավարար կերպով, բացառությամբ պե-
տական հիմնարկների աշխատակիցների արհ-
միությունից, վորը բավականին հաջողու-
թյուններ ունի այդ բնադավառում։ Բավա-
կան և մատնանիշ անել դանազան արհմիու-
թյունների 10000 անդամների վրա, վորոնց
Պետհիմնարկների աշխատակիցների արհմիու-
թյունը ներդրավել և պետհիմնարկների մըշ-
տական աշխատանքի մեջ իրրե սոցհամատե-
ղիչներ։ Մնացյալ արհմիություններից մեծ

մասը պատշաճ ուշադրությունը չի նվիրում
պետապարատի աշխատանքի բարելավմանը,
ինչպես նաև խորհուրդների ամրացմանը լա-
վագույն բանվորներով և բանվորուհիներով.
Այդ հաստատվում ե նրանով, վոր արհմիու-
թյունները պետհիմնարկներում շեֆ աշխա-
տանքները կանոնավորելու հարցում բավա-
կանաչափ ակտիվ մասնակցություն չեն ցույց
տալիս:

Արհմիությունների աշխատանքում խոր-
հուրդների 1930-31 թ. վերընտրությունների
ժամանակ հիմնական թերությունն այն եր,
վոր նրանց կողմից կազմակերպվող ներգոր-
ծությունը աշխատավոր մասսաների վրա
անբավարար եր և շատ հաճախ թույլ, վորի
հետևանքով արհմիությունների անդամները
ներգրավված ենին հաշվետու վերընտրական
կամպանիայի հարցերի ակտիվ մակման գոր-
ծում վոչ ամեն տեղ: Արհմիությունների
նման վերաբերմունքը անցյալում դեպի խոր-
հուրդների վերընտրությունները անկասկած
չեր կարող չանդրադառնալ խորհուրդների
կազմի և նրանց աշխատանքի վրա անցյալ-
ընտրական շրջանում: Արհմիությունների
աշխատանքում խորհուրդների վերընտրու-
թյունների առթիվ նկատմած առ թերու-
թյունը այս կամպանիայում չաետք ե տեղի
ունենան, վորովհետեւ արհմիությունները
բոլոր հնարավորություններն ունեն խոր-

Հուրդների վերընտրություններում իրենց
դերը բարձրացնելու համար:

17-րդ կուս. Համագումարում ընկ. ԿԱ-
ԳԱՆՈՎԻՉԻ ԶԲ ասաց, վոր «Արհմիություն-
ները ահագին Հնարավորություններ ունեն,
հենվելով յուրաքանչյուր բանվորի, յերի-
տառարդության, նոր բանվոր հարվածային-
ների ձեռներեցության վրա, Հարցեր հարու-
ցելու կառավարության և ԿԱ-ի առաջ: Դրժ-
րախտաբար Արհմիությունները դեռևս լիս-
կատար չափով չեն ողտագործում իրենց
Հնարավորությունները: Երանք չեն կարո-
ղանում Հայտնաբերել զրխավորը և ընդհան-
րացնել փաստերը. եմպիրիզմը մաշում և
արհմիություններին»: Արհմիությունները
իրենց աշխատանքում վորոշ վերակառուցում
կատարելով 17-րդ կուս. Համագումարի վո-
րոշումների հիման վրա, ներկայումս ամելի
յեն սերտորեն շաղկապմել աշխատավոր մաս-
սների հետ և դրա միջոցով ել լիովին կարող
են ամելի ակտիվ մասնակցություն մորիլիզա-
ցիա անել իրենց վրա ծանրացած խնդիրները
լուծելու համար խորհուրդների առաջիկա
հաշվետու վերընտրական կամպանիայի առ-
թիվ:

Խորհուրդների անցյալ Հաշվետու վեր-
ընտրական կամպանիայում արհմիութենա-
կան կազմակերպությունները շատ դեպքերում
իրենց գլխավոր անելիքն ելին Համարում մի-
միայն արհմիությունների անդամների մեծա-

մասնության մասնակցությունը հաշվետու
վերոնտրական ժողովներում ապահովելր։
Ներկայումս անդասակարգ սոցիալիստական
հասարակության անմիջական շինարարու-
թյան շրջանում, արհմիությունների անդամ-
ները չպետք ե բավականանան խորհուրդային
իշխանությանը ձայն տալով միայն, չի կարե-
լի վերոնտրությունների ժամանակ սահմա-
նափակվել միայն իր միջից խորհուրդների
համար պատգամավորներ առաջ քաշելով և
հաստատել նրանգ տրվելիք նակագները։

Խորհուրդների ավժմվա հաշվետու վերոն-
տրական կամպանիան պետք ե. քաղաքական
քննություն յինի արհմիությունների համար,
վորոնք մերընտրությունների ժամանակ պար-
տամոր են. մորակացիայի յենթարկել ան-
խտիր իրենց միավորած ռուոր աշխատավորա-
կան մասսաներին հաշվետու վերընտրական
կամպանիայի հարցերը ամենայն ակտիվու-
թյամբ քննարկելու համար, ամրապնդել խոր-
հուրդները լավագույն արտադրողականնե-
րով, հարվածայիններով, և ենտուզիազ-
միստներով, վորոնք հասարակական կազմա-
կերպություններում տարած աշխատանքով
ցուցաբերել են իրենց. ել ավելի մոտեցնել
աշխատավորական լայն մասսաները խոր-
հուրդներին, բարձրացնելով արհմիութենա-
կան անդամների քանակը սեկցիաներում և
պատգամավորական խմբակներում, ուժե-

դացնել վերընտրությունների ժամանակ արհմիությունների բոլոր անդամների ակտիվ վերաբերմունքը դեպի խորհուրդների աշխատանքը վոչ միայն տվյալ վերընտրությունների միջոցին, այլև մինչև հետեյալ հաշվետու վերընտրական կամպանիան և աշխատելնորանոր նվաճումներ անել քաղաքի և դյուզի ռմերձեցմանը բնագավառում :

Այդ խնդիրների հաջող ավարտմանը արհմիությունները կարող են հասնել միմիայն իրենց աշխատանքների ընթացքում հետղհետե վերակառուցում կատարելով, տվյալ կամպանիայի համար համապատասխան կերպով նախապատրաստվելով և ապահովելով կոնկրետ, ոպերատիվ զեկավարությունը արհմիությունների վերադաս ողակների կողմից ստորիններին մինչև տեղիումները ներառյալ արհմիութենական խմբակները և արհմիության յուրաքանչյուր անդամը :

Արհմիությունների անբավարար մասնակցությունը խորհուրդների անցյալ հաշվետու վերընտրական կամպանիային տեղ տեղ անկատած բացասարար անդրադարձավ վերընտրությունների ընթացքի վրա, նրանց արդյունքների և խորհուրդների ներկա կազմի աշխատանքների վրա։ Անցյալ հաշվետու վերընտրական կամպանիային թեև արհմիությունների կողմից հաշվետու և վերընտրական ժողովներ հաճախելու տոկոսը կարելի յե-

բավականաչափ բարձրացնել 1929 թ:
վերընտրությունների համեմատությամբ,
բայց և այնպես նրանց ներկայանալը և մա-
նավանդ նրանց ակտիվությունը չի կարելի
լիովին բավարար համարել մանավանդ Ուղ-
բեկստանի ԽՍՀ-ի (70,9%), Թուրքմենիստա-
նի ԽՍՀ-ի (76,5%), նմանապես մի շարք ավ-
տոնում հանրապետությունների ու մարզերի,
ուր ընտրություններին ներկայանալը բավա-
կանաչափ ցածր ե,-նախընտրական ժողով-
ներին ներկայանալուց ըստ արհմիություն-
ների ամբողջ ԽՍՀՄ-ի մեջ միասին առած
(84%):

Դեռ անցյալում պատգամավորների կաղ-
մում հաճախ առաջարկվում եյին բավարար
չափով չստուգված թեկնածուներ, վորոնց
աշխատանքը խորհուրդներում առաջին իսկ
տմիսներում բացասական արդյունքներ տվեց,
կամ նրանք բոլորովին անդործ եյին մնում
յերկար ժամանակ: Մի քանի արհմիություն-
ների կողմից յեղան դեպքեր ել դասակար-
դայնորեն խորթ տարրերի—նախկին առե-
տրականների և կուլակաթեափ արվածների
ընտանիքի, առաջ քաշման: Նման դեպքեր
տեղի յեն ունեցել թե քաղաքներում և թե
գյուղական վայրերում:

Ապացույց կարող է ծառայել Ուրալի մի
քանի քաղխորհուրդների կեղտոտվելը, վո-
րոնց կազմի մեջ են խցկվել դասակարգայնո-
րեն խորթ տարրեր—նախկին առետրական-

ներ, կուլակներ, գյուղից քաղաք յեկածներ,
նախկին եսերներ, տրոցկիստներ և այլն:
Այդ դասակարգային թշնամիները կեղտուում
եյին խորհրդային ապարատը և ամեն կերպ
վիճեցնում խորհուրդների և նրանց մասսա-
յական կազմակերպությունների աշխատան-
քը, ցրիվ եյին տալիս սրատգամավորներին և
խորհուրդների ակտիվը: Կարող եյին արդյոք
արհմիությունները չիմանալ խորհուրդներում
յեղող այդ դասակարգայնորեն խորթ տարրե-
րի մասին: Իհարկե վոչ, վորովհետեւ նրանց
մեծամասնությունը ընտրվել եր արհմիու-
թյունների անդամ բանվորների և ծառայող-
ների ժողովներում, նախապես քննության
առնելով նրանց թեկնածությունները տեղ-
կոմներում, արհմիութենական կոմիտեներում
և այլ կազմակերպություններում:

Այդպիսի դրություն և տիրում տեղ—տեղ
խորհրդային տնտեսություններում նույն-
ութեաւ: Որինակ՝ Մոսկվայի մարզի Ալեքսան-
դրովսկի շրջանի Բալչոլո գյուղի լուս աշ-
խատավորների միությունը գյուղխորհուրդի
սրատգամավոր եր սռածարկել վարժուհի Դե-
միլովտյին, մորը ինչպես պարզվեց հետո կու-
յակի աղջիկ եր: Դեմիլովտյան անցավ խորհուր-
դի նախադահության կազմի մեջ և «աշխա-
տանքի» սռածին իսկ որերին կորոնակու-
թյան մեջ քաշեց իր կուլակ հորս, քեռուն-
կուրտե Սպիչնիկովին, մասմթերումներից
աղատեց տերտերին և նրանց աջակցությամբ

ագիտացիա եր մղում կոլտնտեսականների ու
մենատնտեսների շրջանում պետությանը
հաց, միս և այլ գյուղատնտեսական մթերք-
ներ տալու դեմ։ Դեմիլովայի այդ ամբողջ
հակահեղափոխական գործունեությունը
թագնում եր նրա հարազատ յեղբայրը—
ԲԳՏ-ի տեսուչը։ Ուգողսկո-Զավողսկոյ շըր-
ջանի Ֆեղերովսկի գյուղխորհրդի նախագահ
եր ընտրվել նախկին սպիտակ գվարդիական մի
սպա, վորն առաջներում թագնում եր կոլ-
տնտեսություններում կուլակությանը, կա-
շառքներ եր վերցնում, հարկադրում եր կոլ-
տնտեսուհիներին և մենատնտեսուհիներին
հացամթերումների պլանը իջեցնելու համար
իր հետ կենակցել։

Մոսկվայի մարզի Գրաչեվսկոյ գյուղխոր-
հուրդում (նույն շրջանի) նախագահ եր
Խցկվել կուլակ, Վալաստնոյ Ստարշինայի
վորդին, գյուղխորհուրդի կազմն ևս կեղտոտ-
ված եր։ Կեղտոտվել եր նույնպես Ուգոտսկի-
-Զավողսկոյ շրջանի Կրիվոչյնսկի, Բա-
լոտսկի և մի շարք ուրիշ գյուղխորհուրդներ։
Ողինցովսկի գյուղխորհուրդի (Իվանովսկի
շրջան) կազմի մեջ եյին ընտրվել յերկու կու-
լակ, յերեք գող, մի պանդոկապետի կին,
յերկու վատնում կատարող։ Գյուղխորհրդի
նախագահը վատնիչ եր և հարբեցող։

Դասակարգայնորեն խորթ տարրերով
գյուղխորհուրդի կազմը աղտոտելու որինակ-

ների թիվ կարելի յե ավելացնել մի շաբք ուրիշ ծայր յերկրների և մարզերի կյանքից, բայց կարիք չկա այդ անել, վորովհետեւ առաջ բերված թվերն ել արդեն հաստատում են մի քանի խորհուրդների աղտոտված լինելը և վկայում են նույնպես, վոր խորհուրդների պատգամավորների թեկնածուներ չոկելու դորձում բավականաչափ ուշադիր չեն:

Դասակարգային տեսակետից քիչ ստուգված, ինչպես նաև վոչ բավականաչափ աշխատունակ թեկնածուների առաջ քաշման հետ միասին առաջներում խորհուրդների մեջ եյին ընտրվում մեծ թվով բոլորովին անդրագետ կամ կիսազրագետ պատգամավորներ: Խորհուրդների կազմում 1930-31թ. ԽՍՀՄ-ի սահմաններում ընտրվել եյին 139·177 անդրագետներ, վոր ամրող կազմի 12,9% ե կազմում. քաղվառհուրդների մեջ ընտրվել եյին 3999 պատգամվոր—2,9%: Գյուղխորհուրդների նախագահների մեջ կային 1920 անդրագետներ (բոլոր գյուղխորհուրդների նախագահների 3,8%): Գյուղխորհուրդների վերստուգիչ հանձնաժողովների կազմում վերջին վերընտրական կամ պանիայում ընտրվել եյին ամրող Միության մեջ 8182 անդրագետ, վոր կազմում եր 45% ընդդեմ 1929թ. ընտրություններում վերստուգիչ հանձնաժողովներում յեղած անդրագետների 2,4%-ի: Մենք գեմ չենք խորհուրդների կազմի մեջ անդրա-

կետներ կամ կիսագրագետներ ընտրելուն։
Հարկավոր ե ամբողջ աշխատավոր աղքա-
բնակչությունը ներգրավել պետությունը կա-
ռավարելու աշխատանքի մեջ, սովորեցնել
նրանց, վերադաստիարակել նրանց այդ աշխա-
տանքում։ Բայց վատ ե այն, վոր խորհուրդ-
ների և գործկոմների անգրագետ և կիսա-
գրագետ անդամները հաճախ չատ թույլ ելին
լծվում իրենց անգրագիտությունը կամ կիսա-
գրագիտությունը լիկվիդացիայի յենթարկե-
լու աշխատանքներին, յերբեմն հրաժարվե-
լով լիկայաններ հաճախել, այդ դեպքերում
ողտագործելով իրենց կազմակերպչական
գիրքը։

Խորհուրդներում դասակարգային տեսա-
կետից խորթ կամ վոչ բավարար չափով աշխա-
տունակ տարերի գոյությունը վորոշ տեղե-
րում արգելք ե հանդիսացել խորհուրդներում
պատշաճ աշխատանք կազմակերպելուն, վորի
պատճառով բավական քանակությամբ խոր-
հուրդներ չեն կարողացել կատարել կուսակցու-
թյան յեվ կառավարության առանձին դիրեկ-
տիվները։ Այդ բոլորը ավելացնում են խոր-
հուրդների կազմի փոխարինելիությունը, մա-
նավանդ գյուղում, ուր հոսունությունը յեր-
բեմն հասնում է մինչև 100%-ի ու ավելի։
Հայտնի յեվոր մի շարք տեղերում 1930-31 թ.
ընտրված գյուղխորհուրդների կազմում այլևս
վոչ մի պատգամավոր չի մնացել, իսկ մինչ
ժամկետը ընտրվածներից արդեն կեսից ավե-

լին հեռացել են։ Միայն 1931 և 1832 թվին
ԱՄՖԽՀՀ-ի գյուղխորհուրդների կազմից հետ
և կանչվել 197.663 պատգամավոր, վոր կազ-
մում և խորհուրդների ամբողջ կազմի 27,1%։
1933 թ. ԱՄՖԽՀՀ-ի գյուղխորհուրդներից հետ
և կանչված 58.218 պատգամավոր (8%)։ Մի-
այսիայն 1933 թ. 2-րդ կիսին ՈՒՍԽՀ-ի գյուղ-
խորհուրդների կազմից հեռացել են 32.254
պատգամավոր, վորոնց թվում 4804 կին։
ՈՒՍԽՀ-ի մեջ շրջգործկոմների կազմից այդ
նույն ժամանակամիջոցում հեռացել են 2617
անդամ։

ԱՄՖԽՀՀ-ի մի շարք ծայրամասերում և
մարզերում 1933 թ. ընթացքում կատարված
մասնակի վերընտրությունների միջոցին,
խորհուրդների կողմից հետ և կանչվել մոտ
50%-ով ու ել ավելի։ Լենինգրադի մարզում
1886 գյուղխորհուրդներից հետ և կանչված
յեղել 9396 պատգամավոր, իսկ մի շարք
շրջաններում գյուղխորհուրդները վերընտր-
վել են ամբողջովին։ Միենույն դրությունը
յեղել են նույնպես մի շարք ուրիշ ծայրյերկր-
ներում և մարզերում։ Բատ վորում հետ կան-
չելու հիմնական պատճառը մեծ մասամբ
յեղել են խորհուրդների մասնակի աղտոտումը
խորթ տարրերով։

Մի շարք քաղաքային խորհուրդներից
նույնպես հեռացել են խոչոր քանակությամբ
անցյալ վերընտրական կամպանիայում վեր-
ընտրվածներ։ Որինակ Մոսկվա քաղաքի շրջ-

խորհուրդներում ընտրված պատգամավորներից մնացել են վոչ ավելի քան կեսը, ըստ վորում մնացողներից ել 25-30%-ի ակտիվ մասնակցություն չունի քաղխորհուրդների և նրանց մասսայական կազմակերպությունների աշխատանքին։ Սվերդլովսկի քաղխորհուրդի կազմի մեջ ընտրվել եյին 300 պատգամավոր, վորոնցից 1933 թ. վերջերին կազմբաժինը հաշվում եր միայն 250 հոգի։ Կրասնադարի քաղխորհուրդում 719 անդամներից այս տարվա սկզբներին մնացել են 260 հոգի միայն։ Չելյաբինսկի քաղխորհուրդում 560 պատգամավորից մնացել եր 300-ից ել պակաս, իսկ յերկու հազար ակտիվից, վորոնք առաջ աշխատում եյին սեկցիաներում և պատգամավորական խմբակներում, 1933 թ. հոկտեմբերին մնում եր 700 հոգի միայն, վորոնցից աշխատում եյին խորհուրդի մեջ կեսից վոչ ավելին։ Այդպիսի դրություն եր տիրում մի շարք ուրիշ քաղաքներում նույնպես, ուր իորբեք անդամների խոչորագույն մասը չեր աշխատում։ Որինակ Ստալինգրադի քաղխորհուրդի սեկցիաներում 1930 թ. 1140 անդամներից աշխատում եր 600 հոգի միայն։ Սամարայի քաղխորհուրդի 12 սեկցիաներում 517 անդամներից աշխատում եր 320-ը։ Աստրախանի քաղխորհուրդի 13 սեկցիաներում նրանց 886 անդամներից 1933 թ. աշխատում եր 254-ը միայն և այլն։

Այդ բոլորը հաստատում ե վոր խորհուրդների համար առաջադրված թեկնածուներ ջոկեյություններին արհմիություններն ու մյուս կազմակերպությունները հարկավոր ուշադրություն չեն ին դարձնում:

Խորհուրդների բնտրության համար քեկնածուներ ջոկեյությունների պետք է դրված լինեն հաշվետու վերընտրական կամպանիայի բոլոր խնդիրների կենտրոնում, վորովհետեւ իշխանության պետական մարմինների համար պատգամավորների բնտրությունը ներկայումս հսկայական քաղաքական և գործնական նշանակություն ունեն: Լենինն ու Ստալինը բանի քանի անդամ մատնանիշ են արել, վոր կազմակերպչական հարցերի բեկոր մարդկանց բնտրության և կատարումների ստուգման մեջն ե կայանում: Կուսակցության և բանիոր դաստկարգի առաջնորդների այդ ցուցմունքները արհմիությունները ինչ ել վոր լինի պիտի կատարեն բնտրությունների ժամանակ, վորովհետեւ նրանց կատարելը հնարավորություն կտա հիմնովին ամրապնդել խորհուրդները և իշխանության պետական մարմինների բոլոր ստորին ողակները դարձնել կուսակցության դիմավոր դժի իրական հաղորդիչները:

Բոլոր խորհուրդները կուսակցության կամքի անմիջական կատարողներու դարձնելը պարտավորեցնում են մեզ այժմվա վերընտրություններին խորհուրդներ ուղարկել վու

միայն առաջավոր արտադրող-հարվածային-ներին, վոչ միայն հասարակական աշխատանքի ենտուզիաստներին, վորոնք խորհուրդներում և նրանց մասսայական կազմակերպություններում իրենց ցուցաբերել են այլև այնպիսի անձնավորություններ, վորոնք լավ իմանում են կուսակցության քաղաքականությունը, խորհրդային որենքները, կուսակցության և կառավարության տակտիկան, վորովհետեւ խորհուրդի անդամները ամենայն որ կարիք են զգալու կյանքում կիրարելու կուսակցության և կառավարության դիրեկտիվները, հարմարեցնելով նրանց տեղական պայմաններին, նրանք ստիպված պիտի լինեն ակտիվ մասնակցություն ունենալ պետապարատի հետագա վերակառուցմանը, աշխատանքի կազմակերպմանը արտադրության մեջ, ձեռնարկություններում, կոլտնտեսություններում, խորհտնտեսություններում, ՄՏ Կայաններում և այլն, ընթանալով աշխատավոր մասսաների առջևից։ Նրանց առաջնակարգ խնդիրն է վերադաստիարակել անձամբ իրենց և քաղաքի ու, մանավանդ, դյուղի բոլոր աշխատավոր մասսաներին։

Խորհուրդների և ամեն մի պատգամավորի վրա այդ խնդիրները պարտավորություն են դնում ամելի ուշադիր մոտենալու ընտրությունների ժամանակ յուրաքանչյուր թեկնածուին, քննության առնելով նրանց ամեն կողմից առանձին ուշադրություն նվիրելով Խոր-

հուրդների համար առաջ մղվող տմեն մի անձի
քաղաքական պատրաստվածությանը, անկախ
նրա կուսակցականությունից : Վորագեսզի կա-
րելի լինի ընտրել խորհուրդների անդամների
կոչումը կրելու արժանի անձնավորություն-
ներ, ընդունակ բաշխելուրեն մասնակցելու Պե-
տությունը կառավարելու դործին, Հարկավոր
և վոր արհմիությունները պատգամավերների
քեկնածուների ընտրության հարցերով զբաղ-
վեն կուսականական կազմակերպությունների
հետ միասին հաշվետու-վերընտրական կամ-
պանիայի առաջին խոկ որերից, Հասուկ ուշա-
դրություն նվիրելով ներկա կազմի ամեն մի
պատգամավորի կողմից խորհուրդներում կա-
տարած աշխատանքի վերաբերյալ Հաշվե-
տմության գնահատականին, ինչորես նաև
սեկցիաներում և պատգամավորական խմբակ-
ներում աշխատող ակտիվի աշխատանքի-բա-
ռուզմանը : Դա Հնարամորություն կտա ներ-
կա կազմի պատգամավորներից և խորհրդա-
յին ակտիվից լայազույններին նշելու, նրանց
խորհուրդների նոր կազմի համար մեջ քա-
շելու նպատակով :

Վորագեսզի խորհուրդների նոր կազմի մեջ
քաղաքականապես կիսագրադեսներ չլինեն
արհմիությունները տնտեսվարների հետ միա-
սին խելույն և յեթ պետք ե կազմակերպեն
կարճատե դասրնթացքներ խորհուրդային ա-
ռաջավոր ակտիվ պատրաստելու համար,

խորհրդային շինարարության թեորիայի և
պրակտիկայի հարցերի մասին, շաղկապելով
այդ աշխատանքը խորհուրդների հետ։ Գյու-
ղերում այդպիսի դասընթացքները պետք ե-
րանալ շրջանային կենտրոններին կից, դաս-
ընթացքների համար հավաքագրելով առաջին
հերթին լավագույն կոլտնտեսականներին,
վորոնք աչքի յեն ընկել արտադրության մեջ,
հասարակական և խորհրդային աշխատան-
քում, նմանապես ազնիվ մենատնտեսներին,
չքավորներից ու միջակներից—վաղվա այդ
կոլտնտեսականներին։

Մասսաների կազմակերպումը հաշվետու-
վերընտրական կամպանիային ակտիվորեն
մասնակցելու տեսակետից պակաս կարեոր
խնդիր չե հանդիսանում արհմիությունների
համար, վորովհետև «կազմակերպչական
հարցը քաղաքականության հարցերին յեն-
թակա մնալով, այնուամենայնիվ այդ նկատի
առնելով սոցիալիստական շինարարության
հետագա նվաճումների համար բացառիկ նշա-
նակություն ե ստանում» (17-րդ կուս. համա-
գումարի կազմակերպչական հարցերի վերա-
բերյալ վորոշումներից)։

Հաշվետու մերընտրական կամպանիայի
կազմակերպչական հարցերը բացառիկ նշանա-
կություն ունեն նրա համար, վոր այդ կամ-
պանիայի մյուս բոլոր հարցերը կախված են
նրանցից, կազմակերպչական հարցերի դնե-

լուց և կախված հաշվետու վերընտրական ժողովների հաջող յելքը կամ նրանց տապարամբ, ժողովներին անբավարար թվով ընտրողներ գալուց պատճառով։ Բավական չեն ուսյնիսկ ապահովել միայն 100%-ով հաշվետու վերընտրական ժողովներին ներկա լինելը, այլ դիմավորը, հարկավոր և կազմակերպել մասսաները նրանց ակտիվորեն մասնակից անելու տվյալ կամպանիայի բոլոր հարցերի քննարկմանը և առաջին հերթին խորհուրդների ու առանձին պատգամավորների հաշվետվությունների, խորհուրդների նոր կազմի թեկնածուների և խորուրդների նորընտիր պատգամավորներին տրվելիք նակազների քննարկմանը։ Ի՞նչն եր խանդարում արհմիություններին խորհուրդների անցյալ հաշվետու վերընտրական կամպանիայում կազմակերպչական հարցերը դնել պատշաճ քարձրության վրա դնելու համար։ Դրա ամենագլխավոր պատճառը մասսաների կազմակերպման հարցերի քաղաքական նշանակության թերագնահատումն եր, վորի շնորհիվ արհմիությունների մեծ մասը այդ կողմից մնացել եյին անդրբծ ընդհուպ մինչեւ հաշվետու և վերընտրական ժողովների սկիզբը։

Վորպեսզի թույլ չտանք այդ քաղաքական սխալը կատարելու այս տարի և ապահովենք արհմիությունների բոլոր անդամների մասնակցությունը 100%-ով հաշվետու վերըն-

տրական ժողովներում և այդ ժողովներում
տվյալ կամպանիայի քոլոր հարցերի ակտիվ
քննարկումը նրանց կողմէից, արհմիություն-
ները պետք ենախապես մի շարք նախապա-
տրաստական միջոցներ ձեռք առնեն:

Ժամանակին տեղերին տալ ծավալուն
դիրեկտիվներ խորհուրդների հաշվետու վեր-
ընտրական կամպանիային արհմիութենական
կազմակերպությունների մասնակցության
մասին (անցյալ հաշվետու վերընտրական
կամպանիայի արհմիությունների կկ-ի և
արհմիությունների յերկրային ու մարզային
խորհուրդների մեծամասնությունը այդ
հարցում չափազանց ուշացավ):

Ապահովել ինստրուկտաժը և արհմիու-
թյունների յերկրային մարզային խորհուրդ-
ների կկ-ի ողնությունը արհմիութենական
կազմակերպությունների ստորին ողակներով-
հաշվետու վերընտրական կամպանիայի բնա-
դավառում աշխատանքները ծավալելու հա-
մար, մասնակցություն ունենալ խորհուրդ-
ների և գործկոմների կազմբաժինների կողմից
բրիգադների կոմպլեկտավորմանը կամպա-
նիաները անցկացնելու հարցերով տեղերն ու-
ղրկելու համար:

Ժամանակին անցկացնել ֆարբիկներում,
գործարաններում, հիմնարկություններում,
ՄՏ կայաններում, խորհմանտեսություննե-
րում և այլն բացատրական կամպանիա առա-

Զիկա վերընտրությունների մասին, ըստ վորում լայնորեն կիրառելով պլակատները, բողոքները, ամեն կերպ ոգտագործելով ռադիոն, տեղական ֆարբիկադործարանային և քաղաքացինների թերթերը և այլն:

Կազմակերպել ձեռնարկություններում բառ հերթափոխերի հաշվետու ժողովներ, այդ ժողովներում լսելով հաշվետու զեկուցումներ ավյալ ձեռնարկության, բոլոր պատգամավորների կատարած աշխատանքների մասին:

Կազմակերպել բոլոր ձեռնարկություններում հաշվետու վերընտրական կամպանիային ոճանորակող հանձնաժողովներ, չաղկապելով նրանց խորհուրդների և գործկումների կազմաժինների հետ և բացի դրանից կազմակերպել մի քանի բրիգադներ ընտրողների ցուցակները և ձայնագուրիկների ցուցակները կազմելու և ընտրողների ու նրանց ընտանիքի անդամներին ծանուցագրերը բաժանելու համար:

Լայն կերպով գործադրել ձեռնարկություններում, հիմնարկներում հաշվետու և վերընտրական ժողովի որերին 5-10 բոլեյաչափ թուցիկ միախաղների կիրառումը, բեմադրությունների կազմակերպումը և այլն նվիրված հաշվետու վերընտրական ժողովների ներկա լինելու կոչին:

Նախորոք հրապարակել տեղական խոր-

հուրդներում պատգամավորներին տրվելիք նակազի նախագիծը և կազմակերպել նակազի վերաբերյալ լրացումների ու փոփոխությունների հավաքում, ժամանակին սիստեմավորելով նրանց վերընտրական ժողովների համար:

Բանվորների և ծառայողների ընտանիքի անդամներին մասնակից անելու հաշվետու վերընտրական ժողովներին հրավիրելով նրանց այդ ժողովներին հատուկ ծանուցադրերով, վորը պետք է տւղարկել տները վոչ ուշ, քան ժողովներից 3-4 որ առաջ:

Վորոնել ժողովների համար համապատասխան շենքերը, կարգի բերելով, նրանց ինչպես հարկն ե, կազմակերպելով այնտեղ մանկական սենյակներ՝ բուֆետներ և այլն:

Այդ միջոցառումների կիրառման և արհմիութենական կոմիտեների ու խորհուրդների և գործկոմների միջև մշտական կապ պահպանելը անկասկած կնպաստե արհմիությունների անդամների 100%-ով ընդգրկմանը հաշվետու վերընտրական ժողովներում և կապահովեն տվյալ կամպանիայի բոլոր հարցերի ակտիվ քննարկումը:

Պատգամավորներին տրվելիք նակազի վերընտրությունների կարևորագույն խնդիրնեն: Առաջներում նակազները հաճախ մնում են յին չիրագործված նկատի առնելով նրանց անռեյալ լինելը նյութական և քաղաքական նկատառումներով: Այդ յերևույթը յերբեմն բա-

ցասաբար եր անդրադառնում աշխատավոր
մասսների վրա։ Դրանից խուսափելու համար
առաջիկա կամպանիային անհրաժեշտ ե ամե-
նայն ուշադրությամբ վերաբերվել տեղական
մամուլում հրատարակված նակազների առ-
թիվ հավաքված լրացումների և առաջարկնե-
րի վերամշակմանը։ Տեղական կոմիտեները
նակազների վերաբերյալ այդ լրացումներն ու
նկատողությունները պիտի համաձայնեցնեն
ավյալ ձեռնարկության վերաբերող մասը ձեռ-
նարկությունների գիրեկցիաների հետ, իսկ
նակազի մեացյալ կետերը տան պատգամավո-
րական խմբակներին խորհրդի կամ գործկոմի
հետ համաձայնեցնելու համար։ Դա կազատի
անիրազործելի նակազներից և հնարավորու-
թյուն կտա կրնատելու այն ժամանակը, վոր
մնուացիոնալ կերպով վատնվում և նրանց
քննության առնելու համար։

Խորհուրդների պատգամավորների հաշվե-
տու կամպանիան և նակազների հավաքման
լավ կանոնավորված աշխատանքը հնարավո-
րություն կտա յերեվան հանելու ձեռնարկու-
թյունների, հիմնարկությունների, խորհարն-
տեսությունների և ՄՏԿ-ի աշխատանքներում
յեղած մի շարք թերությունները և միեվնույն
ժամանակ հաշվետու-վերընտրական կամպան-
իան աշխատավորության մեջ կրարձրացնի
ենտուղիազմի նոր բարձր ալիք։ Արհեստակ-
ցական կազմակերպությունները պիտի կարո-
ղանան ոգտագործել աշխատավոր մասսաների

և նատուրալիազմը իրենց աշխատանքով յերեվան հանված բացերը անմիջապես վերացնելու և սոցիալիստական շինարարությունն ել ավելի բարձր վերելքի հասցնելու համար։ Աշխատանքի արտադրողականության բարձրացնելու մեթոդներից մեկը կարող է հանդիսանալ վերընտրությունների ժամանակ խորհուրդների վերընտրության անվան հարվածային բրիգադների կազմակերպումը և նրանց մրցականը մնացյալ բանվորներին ու ծառայողներին կոնկրետ արտադրական առաջադրանքները կատարելու համար։ Միաժամանակ աշխատանքի արտադրողականության բարձրացման հետ միասին վերընտրությունների ժամանակ, արհմիությունները միջոցներ սկսեաք և ձեռք առնեն ամրապնդելու բարձրացած ալիքը հետագա բոլոր ժամանակների համար։

ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Խորհուրդների հաշվետու վերընտրական կամպանիան անցկացնելու գործում ունի քաղաքական կարեվորագույն նշանակություն մանավանդ այժմ, յերբ կուսակցությունն ու կառավարությունը իրագործում են հիմնական դասակարգերի բանվորների և գյուղացիության միջեվ յեղած տարբերությունը վերացնելու խնդիրները։ Ուստի արհմիությունները

պեսի աշխատանքի ավայլ ժամբ պիտի վերաբերին ամենայն լրջությամբ։

Առաջուրդների հաշվետու վերընտրական կամպանիան դյուզում այս տարի կիրառվելու յի ուրույն պայմաններում։ Մեր դյուզում մենատնտես դյուզացիական սեկտորը այժմ հետև մղված յերկրորդական դիրքերը։ Գյուղի և կանոնիկայում այժմ այլևէ չկա արդեն մասնավոր կապիտալի այն աղղեցւթյունը, վոր կար անցյալ նախընտրական կամպանիայում։ Մանր կտոր մասը արված անտեսության այժմ ընկնում է ընդամենը $15,5\%$ հացատիկային կուլտուրաների ցանված տարծություններ, իսկ սոցիալիստական տնտեսությունները գրավում են ցանքսերի $84,5\%$ ։ Դա վկայում է, վոր «սոցիալիստական ձեռնադիսանում և անսուհմանորեն տիրապետող և միակ զերիշխող ուժը ամբողջ ծղովրդական անտեսության մեջ», ի թիվու, վորի նայել դյուզում։

Բայց դա իհարկե չի նշանակում, թե մեռնող կապիտալիստական դասակարգի մնացորդները իրենց զենքերը վայր են դրել։ Այժմ վահանգիստու վերընտրական կամպանիայում նրանք մի տնդամ ել փորձ կանեն ամեն կերպ խանգարելու կումպանիայի ընթացքը նրանք կեղծ անձանց միջոցով կփորձեն սեվացնել խորհրդների և առանձին պատգամավորների կատարած աշխատանքը, դրա համար ոգտա-

գործելով գյուղխորհուրդների և կոլտնտեսությունների աշխատանքում տեղի ունեցած պակասությունները։ Կուլակության տաքանքների այդ հակահեղափոխական աշխատանքում ամենամոտիկ ոգնականներն են նրա բոլոր հին համհարզները (տերտերները, աղանդավորները, նախկին ռուրյադնիկները և այլն) և նոր գյուղ յեկած դասակարգայնորեն խորթ տարրերը, վորոնց քաղաքներում մերժել են անցազ ըեր տալ։ Դա պարտավորեցնում ե բոլոր կաղմակերպություններին նախապես հաշվի առնել դասակարգային թշնամիների այդ տականքների մանյովըները, հակադրելով նրանց ձեռնարկությունների, խորհմանտեսությունների, ՄՃԿ-ի, կոլտնտեսությունների, բանվորների համախմբված ուժերը։

Քաղաքի բոլոր արհմիությունների կողմից կոնկրետ ոգնությունը պիտի արտահայտվի արհմիությունների ստորին ողակներին պատշաճ ղեկավարություն և պրակտիկ ոգնություն ցույց տալու մեջ, հաշվետու վերընտրական կամպանիան անցկացնելու բոլոր ժամանակամիջոցում բանվորական բրիգադներ ուղարկելով, Փարբիկների, գործարանների, հիմնարկների և կազմակերպությունների կողմից գյուղխորհուրդներին և կոլտնտեսություններին վրա շեֆությունը ամրացնելով և ել ավելի ծավալելով ըստ վորում շեֆության ծավալումը պետք ե տեղի ունենա վոչ միայն

պետհիմնարկների աշխատավորների արհմիության գծով այլև քաղաքային ձեռնարկությունների, տրանսպորտի, կառուցողների, և այլ բանվորներին ընդգրկող մյուս արհմիությունների գծով:

Գյուղին մեծ ողնություն պիտի մտառւցին լուսավորության և արվեստի աշխատավորներին միացնող արհմիությունները, վորոնք անհաղաղ պետք և բացատրական և կուլտկրթական աշխատանք ծավալեն. Անցյալ հաջիետու վերընտցական կամպանիային այդ արհմիությունները հարկավոր չափով այդպիսի աշխատանք չծավալեցին գյուղում:

Արհմիությունների կողմից գյուղը բրիգադ ուղարկելը անցյալում կատարվում եր ամեն մի արհմիության կողմից առանձին և հաճախ առանց խորհուրդների և գործկոմների կազմակերպչական բաժինների գիտության: Դրա հետեւանքը լինում եր այն, վոր առանձին շրջաններում և գյուղերում միաժամանակ հավաքվում եյին մի քանի բրիգադներ, իսկ մյուս մասերը մնում եյին առանց սպասարկման: Այդ բանից խուսափելու համար այս տարի գյուղը բրիգադներ ուղարկելու գործում վորոշ պլանչափություն պետք և մտցնել: Այդ կարելի յե իրադործել միայն այն գեղագում յեթե արհմիությունները սերտ կապ կազմակապաննեն խորհուրդների ու գործկոմների հետ և բոլոր արհմիությունների միահամուռ աշխա-

տակցությամբ։ Արհմիությունների սերտ կապը իրար հետ պետք ե կայանա վոչ միայն գործողության շրջանը գյուղում բաշխելու մեջ, այլ զանազան արհմիություններից կազմված միացյալ բրիգադներ ուղարկելու մեջ այն պայմանով վոր բրիգադում լինեն այնպիսի արհմիության անդամներ, վորոնք աշխատում են ծանր արդյունաբերության մեջ, կուլտ-կրթական հիմնարկներում և այլն։ Այդպիսի բրիգադաները վոչ միայն համապատասխան աղբեցություն կապահովեն վերընտրության յելքի վերաբերմամբ, այլև կողնեն գյուղխորհուրդներին ու կոլտնտեսություններին վերացնելու ժողովրդական կրթության, առողջապահության, ճանապարհաշինարարության, գյուղի բարեկարգության թերությունները և այլն։

Կառուցաղ բանվորների արհմիությունները և ՄՏԿ-ի ու խորհտնտությունների բանվորներին միացնող արհմիությունները շատ կարեվոր դեր պիտի խաղան հաշվետու վերընտրական կամպանիայի կազմակերպման խընդուրում։ Այդ արմիությունների միավորող կազմակերպությունների մեջն ե քողարկվում հաճախ դասակարգային թշնամին քան մի վորյեվե այլ տեղ։ Քաղաք փախած կուլակությունը և այլ հակահեղափոխական տարրերը առաջին հերթին տեղավորվում են շինարարություններում, հաճախ կեղծ փաստաթղթերով

առանում են անցագրեր և ներս խցկվում արհ-
միությունների մեջ։ Իսկ քաղաքի մարդիկ,
չստանալով անցագրեր, դնում են դյուդ և աշ-
խատամերի մտնում խորհանուեսություննե-
րում, Աջկ-սերում կոլտնտեսություններում,
ուր իրենց քայքայիչ դործն են կատարում զսուս
ու փուս։

Վերոհիշյալ արհմիությունները պատ-
րաստ պետք ե լինեն դասակարգային թշնամու-
համանական յելույթներին վերընտրական
կամուանիտայի ժամանակ բուռն դիմադրու-
թյուն ցույց տալու։ Այդ յելույթները կանխե-
լու համար հարկավոր ե նախապես ստուգել
ամեն մի արտադնացի, դյուդից շինարարու-
թյան վրա աշխատելու յեկող ամեն մի նորեկ
անձնավորության, նմանապես վերջին տարի-
ներս քաղաքից դյուզ յեկած և դյուդատնտե-
սական կազմակերպությունները աշխատելու
մտածների քաղաքական դեմքը։ Մնացել ար-
տագնացների և աշխատելու համար նորից
դյուդից նոր քաղաք յեկածների վերաբեր-
մամբ, իրերեվ քաղաքականապես ավելի պակաս
պատրաստվածների, արհմիությունները պետք
ե ժամնատկին քաղաքական դաստիարակչական
աշխատանք ծավալեն, վորպեսզի մինչեւ հաշվե-
տու վերընտրական կամուանիտան նրանց շրջա-
նում լիկվիդացիայի յենթարկեն քաղաքական
անդրագիտությունն ու կիսագրադիտու-
թյունը։

Կառուցողների արհմիության մյուս կարևորագույն խնդիրն է ինչպես նաև մյուս արհմիությունների, վորոնց գծով աշխատում են այդ արտագնացները, աջակցել գյուղական կազմակերպություններին վերոնտրություններն անցկացնելու գործում։ Առ արհմիությունները պետք է մանրամասնորեն բացառություններն սեղոնային աշխատանքը վերջացնելուց հետո գյուղագող արտագնացներին գյուղում տարվելիք հաշվետու վերընտրական կամպանիայի խնդիրները և նրանց դերը այդ կամպանիայում։ Կոլտնտեսականներից և աշխատավոր մենատնտեսներից առաջ յեկած արտառանագները վերընտրությունների ժամանակ կենդանի շաղկապող ողակ պետք է ծառայեն քաղաքի բանվորների համար կոլտնտեսատկան մասսաների հետ մենատնտեսների հետ -վաղվա ալդ կոլտնտեսականների հետ։ Նրանց սլարտականության մեջ է մտնում վոչ միայն եւ ամեւի սերտ կերպով մոտեղնեւ, քաղաքի բանվորներին գյուղատնտեսական բանվորների ու կոլտնտեսականների հետ, այլև ապագուցել չքամոր ու միջակ մենատնտեսներին կոլտնտեսությունները մտնելու անհրաժեշտությունը, վորո նրանց կհասցնի ունելու կոլտնտեսական կյանքի։

Ավելի բարդ պայմաններում տեղի կունենա խորհուրդների հաշվետու վերընտրական կամպանիան ձկնորսական և փայտամշակման

արդյունաբերության արհմիությունների գծով
-ձկնորսության միջոցին ծովում վոչ միայն
իրենց արհմիության անդամների ակտիվ կեր-
պով մասնակից անելու վերընտրություննե-
րին, այլև այն բոլոր աշխատավորներին, վո-
րոնք ժամանակավորապես աշխատում են ի-
րենց արդյունաբերության մեջ։ Դրա համար
վերոհիշյալ արհմիությունները նախորոք
պետք է համաձայնություն կայացնեն տեղա-
կան խորհուրդների հետ և փայտապատրաստ-
ման վայրերում աշխատող բոլոր բանվորնե-
րին ու ձկնորսներին կցեն մերձակա ընտրողա-
կան մասերին, վորտեղից աշխատանքի վայրը
պետք է ուղարկվեն ներկայացուցիչներ հաշ-
վետու և ընտրական ժողովներ դումարելու և
նոր պատղամավորների նակազը կազմելու
համար։

Հաշվետու վերընտրական կամպանիաննե-
րը փայտամշակման աշխատավորների և ձըկ-
նորսների շրջանում նույնպես վոչ միայն պետք
է նպաստեն տեղական խորհուրդների ամրա-
պինդմանը, վոչ միայն վեր բարձրացնեն կու-
տուրքադարձական մակարդակը այդ արտաքին
աշխատանքներում, այլև ենտուղիազմի նոր
հորձանք առաջ բերեն արտադրության մեջ ու
հենց դրանով ել ապահովեն անտառանյութերի
սրատրաստումն և ձկնորսության պլանների
կառարումն ու գերակատարումը։

Կազմբաժինների ոգնությունը արհմիություններին. շատ դեպքերում լինելու յե կարեվորագույն միջոցառումներից մեկը, վորոնք ապահովում են արհմիությունների ակտիվ մասնակցությունը հաշվետու վերընտրական կամպանիայում։ Խորհուրդների և գործկոմների կազմբաժիններում պետք ե համախմբվի արհմիությունների ամբողջ աշխատանքը տրվյալ կամպանիան անցկացնելու գործում։ Դրա համար ել արհմիությունները պատգամավորների հաշվետվության և խորհուրդների վերընտրություններին պատրաստվելու առաջին որերից պետք ե ամենորյա կապ հաստատեն կազմբաժինների հետ, իսկ խորհուրդների և գործկոմներին կից ընտրական կոմիտեները պարտավոր են պարբերաբար լսել իրենց նիստերում արհմիությունների ներկայացուցիչների զեկուցումները իրենց աշխատանքի մասին և ցուցմունքներ տալ խորհուրդների վերընտրությունների աշխատանքում յերեվան յեկած թերությունները անմիջապես վերացնելու համար, ստուգելով իր վորոշումների կատարումը սեկցիաների պատգամավորական խմբակների ու ձեռնարկություններին կից ոժանդակող հանձնաժողովների մասնակցությամբ։


Սոցմրցման ծավալումը արհմիությունների միջեվ հաշվետու վերընտրական կամպանիայի կոնկրետ հարցերի վերաբերյալ վը-

Հոռական միջոցառում և հանդիսանում։ Անցյալ
վերընտրություններին վորոշ արհմիություն-
ներ տոցմբցման հարցերին մոտենում եյին ձե-
վականորեն, տեղ- տեղ պայմանագրեր չեյին
կնքում, իսկ կատարման ստուգումը դրվոծ եր
թույլ։ Ներկա կամպանիայում, յերբ արհ-
միությունները արդեն ուժեղացել են պայքա-
րը դրասենյակային-բյուրոկրատական ղեկա-
վարության դեմ նման ձեվական վերաբեր-
մունք դեպի սոցիալիստական մեթոդները
արհմիությունների աշխատանքում չպետք է
լինի։ Վերընտրությունների նախապատրաստ-
վելու մեջ և այդ կամպանիայի բոլոր ժամա-
նակ արհմիությունները պետք է վերջնակա-
նապես վերացնեն իրենց մոտ յեղած ձեվական
բյուրոկրատական ղեկավարման— «առհասա-
րակ» ղեկավարման մեթոդները և ազատագրը-
վեն աշխատանքում յեղած մյուս թերություն-
ներից, վորոնք մտանանշված են՝ «րդ կուս-
համագումարի վորոշումներում»։

Ուստի խորհուրդների հաշվետու վերըն-
տրական կամպանիայի խնդիրները հաջողու-
թյամբ իրագործելու համար անհրաժեշտ է
վորապեսդի արհմիությունները ուժեղացնեն
իրենց աշխատանքի հետագա վերակառուցումը
այն ուղղությամբ, վորել ավելի սերտորեն
կապվեն իրենց միության աշխատավորական
մասսաների հետ, ել ավելի բարձրացնեն աշ-
խատանքի արտադրողականությունը, բար-

ձրացնեն մասսաների ակտիվությունը անդաս-
սակարգ սոցիալիստական, հասարակություն
կառուցելու կոնկրետ խնդիրների կատարման
դործում ել ավելի հաջողությամբ տանեն թե
քաղաքի և թե գյուղի բանվոր դասակարգի
վերադաստիարակումը:

Արհմիությունների աշխատանքի վերա-
կառուցումը վոչ միայն կրաքելավի բանվոր
դասակարգի և արհմիությունների մեջ ընդ-
դրկված բոլոր աշխատավոր մասսաների ար-
տադրական խնդիրների կատարումը այլև վ
րավականին կմեծացնի խորհուրդների-իրեկվ
պրոլետարիատի գիլտատուրայի պետական
մարմինների, «ռեզերվարը», վորովհետեւ
վերակառուցումը ապահովում և աշխատա-
վոր մասսաների ավելի ընդարձակ ներ-
դրավումը արհմիությունների ակտիվ աշ-
խատանքի մեջ, վորոնց առաջավոր ան-
դամները ավելի ու ավելի յեն ծավալում աշ-
յում, բանմատակարարման բաժնում, (ՈՐՍ)՝
խատանքը խորհուրդներում, կորպերացիա-
կոնտրոլի գծով և հենց գրանով ել ամբապըն-
դում կառուցվող սոցիալիզմի յերկիրը:



ԳԱԱ Հիմնարար Գիտ. գրադ.



FL0039143

(084)

A 1
4247

